Կարգապահական գործ թիվ ԿԳ-25071

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԼԻԴԱ ԳԱԳԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարինե Բաղդասարյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Կարեն Խալաթյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ Արմինե Հովհաննիսյանի և փաստաբան Լիդա Հակոբյանի,

քննության առնելով փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանին **(այսուհետև նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 1038) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Արմինե Հովհաննիսյանը (**այսուհետև՝ Դիմող**), դիմելով Պալատ, հայտնել է, որ փաստաբան Լիդա Հակոբյանը թիվ ԵԴ2/2193/02/25 քաղաքացիական գործով հանդիսանում է հայցվոր կողմի ներկայացուցիչը, իսկ Դիմողը հանդիսանում է պատասխանող կողմի ներկայացուցիչը:

Փաստաբանը, որպես հայցվորի ներկայացուցիչ, առանց Դիմողին տեղեկացնելու, զանգահարել է նշված քաղաքացիական գործով իր վստահորդ Ծաղիկ Գրիգորյանին: Վերջինս պատասխանել է, որ ունի փաստաբան, առաջարկել է հարցերի դեպքում դիմել վերջինիս, սակայն, Լիդա Հակոբյանը շարունակել է խոսակցությունը և առաջարկել բացել վեճի առարկա հանդիսացող բնակարանի դուռը: Խոսակցության ընթացքում Փաստաբանը խոսել է բարձր տոնով, անհարգալից, որի արդյունքում իր վստահորդը հայտնվել է խիստ հուզական վիճակում: Հեռախոսազրույցի ավարտից հետո, Ծաղիկ Գրիգորյանը փորձել է զանգահարել իր դստերը, սակայն սխալմամբ զանգահարել է Լիդա Հակոբյանին, ով պատասխանել է հեռախոսազանգին և չի տեղեկացրել, որ

Թիվ ԿԳ-25071-2-Ա
27.08.2025թ.

Ծաղիկ Գրիգորյանն իրեն է զանգահարել, ոչ թե իր դստերը, լուռ լսել է խոսակցությունը և ձայնագրել: Հետագայում այդ երկու հեռախոսային խոսակցությունների ձայնագրությունները ներկայացրել է դատարան:

Դիմումին կից ներկայացվել են ձայնագրություններ և փաստաթղթեր:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 05.06.2025 թվականին Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 03.07.2025թ. գրությամբ ներկայացրել է «cabinet.armlex.am» էլեկտրոնային քաղաքացիական դատավարության կայքէջից արտատպված նյութեր՝ թիվ ԵԴ2/2193/02/25 քաղաքացիական գործով Փաստաբանի վստահորդի անունից ներկայացված միջնորդության պատճենը, գրությունների պատճենները, ինչպես նաև Փաստաբանի և Դիմողի վստահորդ Ծաղիկ Գրիգորյանի միջև հեռախոսազրույցի ձայնագրությունը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Դիմողն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Լիդա Հակոբյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Արմինե Հովհաննիսյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 21.05.2025թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ թիվ ԵԴ2/2193/02/25 քաղաքացիական գործի շրջանակներում ներկայացնում է հայցվոր Սյուզաննա Այվազյանի շահերը:

Դիմողի կողմից նշված ձայնագրությունը կատարվել է իր վստահորդի՝ Սյուզաննա Այվազյանի կողմից, երբ ինքը բարձրախոսով իր վստահորդի ներկայությամբ փորձել է Ծաղիկ Գրիգորյանի հետ առկա վեճը հաշտությամբ լուծել: Իր գործողություններն ուղղված են եղել ի շահ իր վստահորդի և ի շահ արդարադատության իրականացմանը:

Ինչ վերաբերում է հեռախոսային երկրորդ խոսակցությանը, ապա այն ձայնագրել է ինքը, սակայն դատարան ուղարկել է սխալմամբ, ինչի վերաբերյալ դատարան է ներկայացրել դիմում և միջնորդություն:

Փաստաբանը նշել է, որ իր վստահորդի պահանջով բազմիցս զանգահարել է Ծաղիկ Գրիգորյանին, և վերջինս որևէ գրավոր դիմում կամ պահանջ չի ներկայացրել, որ բանակցությունները վարվեն միայն իր փաստաբան Արմինե Հովհաննիսյանի ներկայությամբ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 05.06.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 03.07.2025թ. ներկայացրել է հայցադիմում թիվ ՎԴ/5399/05/23 վարչական գործով:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Փաստաբանն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ հավելելով, որ մինչ այդ մի քանի անգամ կապ է հաստատել Ծաղիկ Գրիգորյանի հետ, սակայն իրավիճակը փոխվել է, երբ առաջացել է վեճ բնակարանի վերաբերյալ:

Փաստաբանը հավելել է նաև, որ ցանկացել է վեճը լուծել այնպես, որպեսզի չստեղծվի ավելորդ լարվածություն:

Փաստաբանը նշել է, որ չի տեղեկացրել Դիմողին նրա վստահորդի հետ շփումների մասին:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 27.05.2025թ. թիվ 164-Ա/ԿԳ-25071 որոշմամբ փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք) 19-րդ հոդվածի 2-րդ կետի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 5.3 ենթակետի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

02.06.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Հայկ Ծատուրյանին (**այսուհետև նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 01.08.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-2-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 27.08.2025թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Լիդա Հակոբյանը հանդիսանում է թիվ ԵԴ2/2193/02/25 քաղաքացիական գործով հայցվոր Սյուզաննա Այվազյանի ներկայացուցիչը, իսկ Դիմող՝ փաստաբան Արմինե Հովհաննիսյանը՝ նույն գործով պատասխանող Ծաղիկ Գրիգորյանի ներկայացուցիչը: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև թիվ ԵԴ2/2193/02/25 քաղաքացիական գործի վերաբերյալ դատալեքս դատական տեղեկատվական համակարգում առկա*

տեղեկություններով:

2. Փաստաբան Լիդա Հակոբյանը զանգահարել է Դիմող փաստաբան Արմինե Հովհաննիսյանի վստահորդ հիշյալ գործով պատասխանող Ծաղիկ Գրիգորյանին: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի և Փաստաբանի բացատրություններով:*

3. Փաստաբան Լիդա Հակոբյանը չի տեղեկացրել փաստաբան Արմինե Հովհաննիսյանին Ծաղիկ Գրիգորյանի հետո հետագա հաղորդակցությունների վերաբերյալ և այդ կապակցությամբ չի ստացել նրա համաձայնությունը: ***Նշված փաստը հաստատվում է*** *Հանձնաժողովի նիստի ընթացքում Փաստաբանի կողմից հայտնած դիրքորոշմամբ:*

4. Ծաղիկ Գրիգորյանի կողմից փաստաբան Լիդա Հակոբյանի՝ որպես գործով հակառակորդ կողմի ներկայացուցչի հետ շփում չի նախաձեռնվել: ***Նշված փաստը հաստատվում է*** *Հանձնաժողովի նիստի ընթացքում Փաստաբանի կողմից հայտնած դիրքորոշմամբ:*

5. Փաստաբան Լիդա Հակոբյանը չի նախազգուշացրել Ծաղիկ Գրիգորյանին հեռախոսազրույցից հետո հետագա քննարկումները Կանոնագրքի 5.3-րդ կետին համապատասխան իրականացնելու մասին: ***Նշված փաստը հաստատվում է*** *Հանձնաժողովի նիստի ընթացքում Փաստաբանի կողմից հայտնած դիրքորոշմամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Լիդա Գագիկի Հակոբյանը փաստաբան է հանդիսանում 16.10.2010 թվականից, և 2020-2025թթ ընկած ժամանակահատվածում ունի 2 կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 5.3 ենթակետի խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ*

անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, Դիմողն, ըստ էության, փաստաբան Լիդա Հակոբյանին վերագրում է հակառակ կողմի հետ շփման կանոնների խախտման վարքագիծը:

Վերոգրյալի համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցին.

- ***արդյո՞ք փաստաբան Լիդա Հակոբյանն անմիջական տեղեկություն է փոխանակել փաստաբան Արմինե Հովհաննիսյանի վստահորդ Ծաղիկ Գրիգորյանի՝ որպես գործով հակառակորդ կողմի հետ,***
- ***արդյո՞ք փաստաբան Արմինե Հովհաննիսյանը տեղեկացված է եղել և տվել է իր համաձայնությունը, որպեսզի փաստաբան Լիդա Հակոբյանն անմիջական տեղեկություն փոխանակի իր վստահորդ Ծաղիկ Գրիգորյանի հետ,***
- ***արդյո՞ք Ծաղիկ Գրիգորյանը՝ որպես հակառակորդ կողմ ինքն է նախաձեռնել շփումը փաստաբան Լիդա Հակոբյանի հետ,***
- ***արդյո՞ք փաստաբան Լիդա Հակոբյանը նախազգուշացրել է հակառակորդ կողմին քննարկումները Կանոնագրքի 5.3-րդ կետին համապատասխան իրականացնելու վերաբերյալ:***

Համադրելով սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրություններն ու ապացույցները մեջբերված նորմերի ու հիմնավորումների հետ, ինչպես նաև անդրադառնալով դրանց վերը ներկայացված հարցադրումների համատեքստում, Հանձնաժողովն արձանագրել է, որ փաստաբան Լիդա Հակոբյանը թիվ ԵԴ2/2193/02/25 քաղաքացիական գործով հանդիսանում է հայցվոր կողմի ներկայացուցիչը, իսկ դիմող Արմինե Հովհաննիսյանը հանդիսանում է պատասխանող կողմի ներկայացուցիչը:

Փաստաբան Լիդա Հակոբյանը հեռախոսազանգի միջոցով քննարկում է իրականացրել նշված գործով որոշ հանգամանքների վերաբերյալ Դիմող փաստաբան Արմինե Հովհաննիսյանի վստահորդ Ծաղիկ Գրիգորյանի հետ և այդ կապակցությամբ չի տեղեկացրել Դիմողին և չի ստացել նրա համաձայնությունը:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ի թիվս այլնի պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Փաստաբանի վարքագծի կանոնագիրք 5.3 ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ *Փաստաբանը չպետք է որևէ դատական գործի կամ խնդրի հետ կապված անմիջական տեղեկություն փոխանակի հակառակորդ կողմի հետ, եթե այդ կողմին ներկայացնում է մեկ այլ փաստաբան՝ առանց այդ փաստաբանի համաձայնության (ավելին, վերջինս պետք է տեղեկացված լինի նման հաղորդակցության մասին), բացառությամբ այն դեպքի, երբ հակառակորդ կողմն ինքն է նախաձեռնել հանդիպումը կամ այդ գործընթացի ժամանակ հակառակորդ կողմի փաստաբանը ներկա չէ: Փաստաբանը պարտավոր է նույն կետում նշված կանոնի մասին նախազգուշացնել հակառակորդ կողմին և հետագա քննարկումները կազմակերպել նրա փաստաբանի ներկայությամբ:*

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ, փաստաբանի համար վստահորդի իրավունքների և շահերի բարեխղճորեն պաշտպանելու պարտականությունից բացի, փաստաբանի համար սահմանվում են նաև որոշակի պարտավորություններ և սահմանափակումներ: Ըստ այդմ, փաստաբանին արգելվում է որևէ շփում ունենալ հակառակորդ կողմի հետ, այն դեպքում, երբ վերջինիս իրավունքները և օրինական շահերը ներկայացնում է մեկ այլ փաստաբան՝ առանց այդ փաստաբանի համաձայնության:

Նշված կանոնից բացառություն է կազմում միայն այն իրավիճակը, երբ նման շփումը նախաձեռնում է հենց հակառակորդ կողմը, և այս դեպքում փաստաբանի նկատմամբ սահմանվում է պարտականություն՝ իրազեկել հակառակորդ կողմին Կանոնագրքի 5.3-րդ կետի պահանջների վերաբերյալ և հետագա քննարկումները կազմակերպել նրա փաստաբանի ներկայությամբ:

Համադրելով վերը ներկայացված նորմերը և հիմնավորումները գործի փաստական հանգամանքների հետ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը, իր իսկ պնդման համաձայն, մինչև սույն գործով դիմումի ներկայացման հիմք հանդիսացող խոսակցությունը, մի քանի անգամ կապ է հաստատել հակառակորդ կողմ Ծաղիկ Գրիգորյանի հետ, ում շահերը ներկայացրել է Դիմողը:

Հանձնաժողովը հաստատված է համարում,որ թիվ ԵԴ2/2193/02/25 քաղաքացիական գործով Փաստաբանը, հանդիսանալով հայցվորի ներկայացուցիչը, տեղյակ է եղել, որ Դիմողը ներկայացնում է Ծաղիկ Գրիգորյանի շահերը, ուստի հակառակորդ կողմի հետ շփումները պարտավոր էր կազմակերպել Կանոնագրքի պահանջներին համապատասխան և չփոխանակել որևէ տեղեկատվություն նշված գործի վերաբերյալ:

Ըստ այդմ, նկատի ունենալով, որ սույն կարգապահական գործով քննարկման առարկա իրավիճակում հակառակորդ կողմ Ծաղիկ Գրիգորյանին զանգ կատարելու նախաձեռնությամբ հանդես է եկել հենց Փաստաբանը, Հանձնաժողովն արձանագրում է, որ Կանոնագրքի 5.3 ենթակետով սահմանված բացառության կիրառման հնարավորությունը բացակայում է, որպիսի պայմաններում բացառվում է նաև այնպիսի իրավիճակ, որի շրջանակներում Փաստաբանը կարող էր Ծաղիկ Գրիգորյանին տեղեկացնել քննարկումները վերջինիս փաստաբանի մասնակցությամբ իրականացնելու մասին:

Այսինքն, ստացվում է, որ Փաստաբանը կապ է հաստատել Ծաղիկ Գրիգորյանի հետ առանց Դիմող փաստաբան Արմինե Հովհաննիսյանի համաձայնության, ինչը կոնկրետ այս իրավիճակում պարտավոր էր ապահովել Փաստաբանը շփումները հակառակորդ կողմի հետ սահմանված կարգով կազմակերպելու համար:

Նման պայմաններում, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցները իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 5.3 ենթակետի պահանջների խախտման հատկանիշները:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Համաչափության սկզբունքը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Մեղքի աստիճանը

Տվյալ պարագայում, Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ գործի նյութերով հաստատված է համարվում, որ Փաստաբանը գիտեր այն հանգամանքի մասին, որ թիվ ԵԴ2/2193/02/25 քաղաքացիական գործով պատասխանող՝ Ծաղիկ Գրիգորյանի շահերը ներկայացնում է Դիմող՝ փաստաբան Արմինե Հովհաննիսյանը, որպիսի պայմաններում Փաստաբանի կողմից նախաձեռնվող ցանկացած շփում վերջինս կարող էր և պարտավոր էր կազմակերպել միայն Դիմողի համաձայնությամբ:

Փաստաբանի անձը, կարգապահական վարույթները, առկա տույժերը

Հանձնաժողովը հաշվի է առնում Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, այդ թվում նաև՝ Փաստաբանի մոտ չմարված 2 կարգապահական տույժերի առկայության փաստը, ինչից ելնելով նրա նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ կիրառում է «խիստ նկատողություն», ինչպես նաև որպես լրացուցիչ կարգապահական տույժ՝ «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել» տույժի տեսակները:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

***1. Փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանի (արտոնագիր թիվ 1038) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ «պարտադիր վերապատրաստման դասընթացների**

մասնակցություն»՝ 12 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Դեոնթոլոգիա» թեմայով՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 5.3 կետի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25071-2-Ա
27 օգոստոսի 2025թ.
ք.Երևան